մանական աշխարհում չպտնի է, որ Եօհաննա Սպիրին գլխաւորապէս մանկական հեղինակ է։

Բար.

---

**ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ, բժշկապետ (Թիֆլիսեցի)։—«ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆ»։ Առողջապահութեան և բժշկականութեան հանրամատչելի զրոյցներ։ Հատոր առաջին, տետրակ առաջին։ Թիֆլիս, տպ. Տ. Նազարեանցի 1891 թ.։ Մեծադիր, 106 երես, տառ № 10, գինն է 70 կոպէկ։**

---

Թերևս երկար թուէր սպասելը, մինչև որ ներկայ գրքի մասին գրուէր մանրամասն քննադատութիւն մասնագիտական տեսակէտից. մինչդեռ պ. Տէր-Գրիգորեանցի այս հրատարակութիւնը ամենայն իրաւունքով կարող է պահանջել հասարակութեան և մամուլի ուշադրութիւնը իւր վերայ հէնց իւր երևան գալուն պէս։ Պ. Տէր-Գրիգորեանցի «Հանրամատչելի բժշկարանը» մի սովորական գրքի հրատարակութիւն չէ, այլ մի ամբողջ ձեռնարկութիւն է և մի երևոյթ մեր աղքատիկ գրականութեան մէջ։ Դատեցէք միայն սորանով, որ ներկայ գիրքը սկիզբն է հրատարակութիւնների մի ամբողջ շարքի, որոնք միասին պէտք է կազմեն մեծադիր և մանրատառ տպած 720 երեսներ։

Աշխատասիրողը հետևեալ կերպ է որոշում իւր հրատարակութեան նպատակը և բնաւորութիւնը՝ «Հանրամատչելի բժշկարան ասելով, մենք հասկանում ենք ոչ թէ հիւանդութիւններ բժշկելու մի ժողովածու, որ իւրաքանչիւր հիւանդութիւն բժշկելու համար առաջարկում է այս կամ այն խորհուրդը, այս կամ այն դեղերը. այդ անունով ընդունում ենք (?) մի հանրամատչելի ձեռնարկ, որ ծանօթացնում է ընթերցողին բժշկականութեան և առողջապահութեան ալժմեան ուղղութեան հետ, պարզում, բացատրում է հիւանդութիւնների ծագման և տարածման պատճառները և հիւանդութիւնների առաջն առնելու համար նպատակայարմար միջոցներ է առաջարկում, սովորեցնում է ընթերցողին՝ իւրաքանչիւր հիւանդութեանը գիտակցաբար վերաբերուել (երես 9—10)։

Գիրքը, որպէս ասուած է երես 9, «ամփոփելով իւր մէջ բժշկական և առողջապահական գիտութիւնների սկզբունքները՝ կարող է ուղեցոյց լինել իւրաքանչիւր զարգացած մարդուն՝ գիտակցաբար ըմբռնելու առողջապահական և բժշկական հարցերը»։

Գրքից վերցրած այս քաղուածքներով միանգամայն որոշւում է այս հրատարակութեան բնաւորութիւնը և նպատակը։ Ներկայ առաջին տետրակի ընթերցումը մեզ համոզում է որ աշխատասիրողը բարեխղճաբար

պահպանել է այն սահմանները, որոնցից դուրս գալը կը լինէր չեղումն իւր առաջադրած նպատակից։ Մենք ուզում ենք ամենից առաջ չեշտել որ պ. Տէր-Գրիգորեանցի «Հանրամատչելի բժշկարանը» ոչ թէ ժողովրդական ընթերցանութեան համար է, այլ միմիայն զարգացածների համար է, և որ նա ոչ թէ մեզ դեղատոմսեր է առաջարկում ամեն տեսակ հիւանդութիւններ այդ գրքով բժշկելու համար, այլ մեզ նախապատրաստութիւն է տալիս՝ դէպի հիւանդութիւնները գիտակցաբար վերաբերուելու։ Այս երկու պայմանները բարեխղճօրէն պահպանուած են աշխատասիրողի կողմից։

Ընդհանրապէս ժողովրդի համար նշանակուած չը լինելով, այլ միայն զարգացածների համար, այս հրատարակութիւնը այնուամենայնիւ կողմնակի կերպով ժողովրդական մեծ խաւերին է ծառայում, քանի որ բոլոր զարգացած ընթերցողներին նա դարձնում է ազնիներ՝ աւողջապահական և բժշկական խելացի հայեացքներ տարածելու համար իրանց չրջապատող ընտանիքների մէջ։

Իւր նպատակին հասած լինելու համար, մնում է միայն որ այս հրատարակութիւնը գրուած լինի այնպիսի լեզուով և տպագրուած լինի այնպէս, որ գոնէ զարգացածները ախորժութեամբ կարդան։ Եւ ահա այդ նկատմամբ մենք ունենք մի քանի ծանր նկատողութիւններ անելու, որովհետև, մեր կարծիքով, եթէ լաչորդ գրքերը այն պակասութիւններից զերծ չը մնան, հրատարակութիւնը կարող է նոյն իսկ վտանգի ենթարկուել լաչողութեան և բարի անունի կողմից։ Ներկայ առաջին տետրում դրականապէս վխտում են լեզուի և մանաւանդ կէտադրութեան սխալները, դեռ բոլորովին չը խօսած բուն տպագրական սխալների մասին, որոնք նոյնպէս աւելի են, քան այդ ներելի է մի գրքի համար։

Օրինակներ։ Երես 26. «ուրեմն փտումն, նեխումն, (աւելորդ ստորակէտ) մի տեսակ միկրոբների գործունէութեան հետևանքներ են, (ստորակէտի տեղ ալստեղ պէտք է վերջակէտ լինէր) հուչակաւոր Պաստէօրը հաստատեց նմանապէս որ թթուումը ևս մի տեսակ միկրոբների աղդեցութեամբն է կատարուում, (ստորակէտից լետոյ ալստեղ պէտք է կրկնուէր որ խոսքը) շաքարը թթուելով՝ սպիրտի, ածխաթթուի և այլ մի քանի տեսակ նիւթերի է փոխուում, (աւելորդ ստորակէտ) և (ալստեղ նոյնպէս պէտք էր կրկնել որ) այդ գործողութեան մէջ զեր են կատարում saccharomices cerevisiae բուսականութեանը պատկանող մանր էակները»։

Երես 27. «այդպիսով կարելի է պարզել իւրաքանչիւր վարակիչ հիւանդութիւնների ընթացքի տարբերութիւնը»։ Պարզ է որ պէտք է ասել՝ իւրաքանչիւր հիւանդութեան և ոչ իւրաքանչիւր հիւանդութիւնների։

Նոյն երես. «գառնանք այժմ այն պայմանների վերայ խոսելու, որոնք, (աւելորդ ստորակէտ) կարողանում են խանգարել և այլն։

Կամ երես 40. «եթէ սենեակի պատերը, լուսամուտները. (պէտք է

լինէր ստորակէտ) դռները լուսալի կերպով լաւ փակւած չեն (այստեղ պէտք էր դնել ստորակէտ) ի հարկէ, որ ծծմբաթթւատը և այլն։

Կամ երես 41. «Կաբրոլեան թթւատի դէզինֆեկցիական յատկութիւնների մասին գիտնականները, (աւելորդ ստորակէտ) տարբեր կարծիքներ են յայտնում»։

Կամ երես 42. «Խլորացինկը միկրոբաջինջ և գարշահոտութիւնն անհետացնող միջոց է, (պէտք է լինէր վերջակէտ) դորա ջրախառնուրդները այլ և այլ անուններով ծախւում են» և այլն։

Կամ երես 16. «...չը նայելով որ միևնոյն տեսակ վարակիչ հիւանդութիւնները տարածւած էին լինում միաժամանակ երկրագնդիս զ ա ն ա զ ա ն  տ ա ր բ ե ր (այդ երկու խօսքերից մէկն ու մէկը աւելորդ է) պայմաններով տեղերում»։

Կամ այսպիսի նախադասութիւն, երես 50. «Մարդկանց այս տեսակ անընդունակութիւնը (այսինքն շատերի անընդունակութիւնը քութէշով հիւանդանալու) բացատրւում է նրանով, ե ր բ միևնոյն ընտանիքի մէջ մի քանիսները վարակւում են, իսկ միւսները ոչ. չը նայելով որ ամենքն էլ միևնոյն թոյնի ազդեցութեանն են ենթարկւած և ոչ մէկը նրանցից նախապաշտպանողական միջոցներ գործ չէ դրած»։ Սակայն դորանով ես ամենևին չը հասկացայ, թէ ինչով է բացատրւում քութէշով հիւանդանալու անընդունակութիւնը շատերի կողմից։

Ահա այսպիսի և դոցա նման լեզուի, մտքի, կէտադրութեան, տպագրական սխալները, որ ամէն քայլափոխում հանդիպում ենք, շատ մնասակար կարող են դառնալ մանաւանդ մի այսպիսի հրատարակութեան համար, որը նշանակւած է ամէն զարգացած ընտանիքի գրադարանում տեղ բռնելու և որի գլխաւոր արժանիքներից մէկը պէտք է լինի անշուշտ՝ մտքի արտայայտութեան գիտական ճշդութիւնը՝ միացած լեզուի դիւրամատչելիութեան հետ։

Ի բաց առած գրքի այդ պակասութիւնը, որոնցից, ի հարկ է, շատ հեշտ է խոյս տալ յաջորդ տետրակներում, առհասարակ պատմելու եղանակը պարզ է և հասկանալի։

Այս առաջին տետրակը պարունակում է իւր մէջ, բացի յառաջաբանից, հետևեալ հատւածները՝ միկրոբներ, նախապաշտպանողական միջոցներ, կարմրախտներ, այն է՝ քութէշ, կարմրուկ, կեղծ կարմրուկ, ծաղիկ, ծաղկի պատւաստումը, ջրծաղիկ, կարմիր քամի, բծաւոր տիֆ։ Գինն է 70 կոպէկ, որ, ի նկատի առած գրքի մեծ ծաւալը, չափաւոր է։

Մի նկատողութիւն ևս։ Գրքի ամէն մի հատւածի բովանդակութիւնը, բացի հատւածի ճակատին դնելուց, շատ նպատակայարմար կը լինէր պատմելու ժամանակ կրկնել։ Այդ շատ կը հեշտացնէր գրքից օգուտ քաղելը մանաւանդ հիւանդատէրերի կողմից։

Ն.*